ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 01.09.2017թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի

թիվ ԳԲԽ-ԷՍ-2017/31

ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը (այսուհետ՝ նաև Խորհուրդ) քննելով «Նաս Ջեներալ Թրեյդինգ» ՍՊԸ-ի 15.08.2017թ. ներկայացրած բողոքը (այսուհետ՝ նաև բողոք) և կից նյութերը, ՀՀ գյուղատնտեսության նախարարության 17.08.2017 թիվ ԱԿ/ԿԱ-1/7445-17 (այսուհետ՝ նաև Պատվիրատու) գրավոր դիրքորոշումը, պարզեց հետևյալը.

1. **«Նաս Ջեներալ Թրեյդինգ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.**

«Նաս Ջեներալ Թրեյդինգ» ՍՊԸ-ն (այսուհետ՝ նաև Ընկերություն) 15.08.2017թ. ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

«ՀՀ գյուղատնտեսության նախարարությունը հայտարարել է «ՀՀ ԳՆ-ԲՄԱՊՁԲ-17/2» ծածկագրով բաց ընթացակարգ (այսուհետ՝ նաև Ընթացակարգ), որին ի լրումն այլ մասնակիցների մանակցել է նաև «Նաս Ջեներալ Թրեյդինգ» ՍՊԸ-ն: Մրցույթը հայտարարվել է մեկ չափաբաժնով, գնման առարկա է հանդիսացել ՀՀ գյուղատնտեսության նախարարության կարիքների համար գյուղատնտեսական տեխնիկայի ձեռքբերումը:

«ՀՀ ԳՆ-ԲՄԱՊՁԲ-17/2» ծածկագրով Ընթացակարգի հայտերի բացման նիստի թիվ 2 արձանագրությամբ «Նաս Ջեներալ Թրեյդինգ» ՍՊԸ-ն ճանաչվել է 1-ին չափաբաժնով 1-ին տեղն զբաղեցրած մանակից՝ առաջարկելով ամենացածր գինը, և համաձայն նույն

թվականի հուլիսի 13-ին ատացված ծանուցման՝ երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացրել է վերոհիշյալ հրավերի 2-րդ մասի 3-րդ բաժնով նախատեսված որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերն ու առաջարկված ապրանքի ամբողջական նկարագիրը:

«ՀՀ ԳՆ-ԲՄԱՊՁԲ-17/2» ծածկագրով ընթացակարգի հանձնաժողովի նիստի նույն թվականի օգոստոսի 8-ի որոշմամբ (արձանագրություն թիվ 3) «Նաս Ջեներալ Թրեյդինգ» ՍՊԸ-ի կողմից մեկ աշխատանքային օրվա ընթացքում ներկայացվել է ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված թիվ 1 հավելվածի 32-րդ կետի 1-ին ենթակետի (զ) կետին համապատասխան առաջարկվող ապրանքի նկարագիրը:

«ՀՀ ԳՆ-ԲՄԱՊՁԲ-17/2» ծածկագրով ընթացակարգի հանձնաժողովի նիստի նույն թվականի օգոստոսի 10-ի որոշմամբ (արձանագրություն թիվ 4) մերժվել է «Նաս Ջեներալ Թրեյդինգ» ՍՊԸ-ի հայտը և առաջին տեղն զբաղեցրած մասնակից է հայտարարվել «Հրաշք Այգի» ՍՊԸ-ն:

«Նաս Ջեներալ Թրեյդինգ» ՍՊԸ-ն համարում է, որ ՀՀ գյուղատնտեսության նախարարության կողմից խախտվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով սահմանված պահանջները»:

Ընկերությունն ի լրումն բողոքում նշված հիմքերի, գրավոր դիրքորոշմամբ հայտնել է հետևյալը.

«ՀՀ գյուղատնտեսության նախարարության կողմից կազմակերպված՝ «ՀՀ ԳՆ-ԲՄԱՊՁԲ-17/2» ծածկագրով բաց ընթացակարգին հայտ է ներկայացրել նաև «Նաս Ջեներալ Թրեյդինգ» ՍՊԸ-ն, որը ընթացակարգի հայտերի բացման 28.07.2017թ. (2-րդ արձանագրություն) նիստով ճանաչվել է որպես առաջին տեղն զբաղեցրած մասնակից և առաջարկվել է 3 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերի 2-րդ մասի 3-րդ բաժնով նախատեսված փաստաթղթերն ու առաջարկված ապրանքի (ապրանքների) ամբողջական նկարագիրը:

Ընկերությունը 02.08.2017թ. ներկայացրել է իր որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերն, այդ թվում նաև թիվ 6.1 հավելվածը՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը՝ հրավերի տեխնիկական բնութագրին համապատասխան:

08.08.2017թ. կայացած հանձնաժողովի նիստի թիվ 3-րդ արձանագրությամբ նշվել է, որ ուսումնասիրվել է Ընկերության կողմից ներկայացված որակավորման

չափանիշները հիմնավորող փաստաթղթերը և առաջարկվել է Ընկերությանը մեկ աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել առաջարկվող ապրանքի նկարագիրը ՀՀ կառավարության 2017 թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 32-րդ կետի 1-ին ենթակետի զ. կետին համապատասխան, ինչպես նաև ներկայացվել է ծանուցում Ընկերությանը, որ անհրաժեշտ է մեկ աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել առաջարկվող ապրանքի նկարագիրը ՀՀ կառավարության 2017 թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 32-րդ կետի 1-ին ենթակետի զ. կետին համապատասխան:

ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի (այսուհետև՝ Կարգ) 32-րդ կետի 1-ին կետի զ. ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ՝ մասնակիցը հայտով ներկայացնում է ապրանքների գնման դեպքում իր կողմից հաստատված հայտարարություն՝ առաջարկվող ապրանքի՝ հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին համապատասխանության վերաբերյալ՝ պայմանով, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում հրավերով սահմանված կարգով ներկայացնում է նաև առաջարկվող ապրանքային նշանն արտադրողի անվանումը, ծագման երկիրը, ապրանքի տեխնիկական բնութագրերը (այսուհետ՝ ապրանքի ամբողջական նկարագիր):

Կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետի 1-ին պարբերության համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարն՝ էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, բացառությամբ նույն կարգով նախատեսված դեպքերի, ապրանքների գնման դեպքում նաև նույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը, իսկ բանկային երաշխիքի ձևով ներկայացված հայտի ապահովման բնօրինակը՝ կից գրությամբ:

Կարգի 46-րդ կետով սահմանվել է, որ համաձայն՝ նույն կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետով նախատեսված ժամկետի ավարտին հաջորդող աշխատանքային օրը քարտուղարն էլեկտրոնային եղանակով հանձնաժողովի անդամներին միաժամանակ տրամադրում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերի պատճենները, գնահատման թերթիկների երկուական օրինակ և կոմիտեից ստացված տեղեկատվությունը: Հայտերի գնահատման արդյունքների

հաստատման նիստը հրավիրվում է ոչ ուշ, քան փաստաթղթերը հանձնաժողովի անդամներին տրամադրվելուն հաջորդող երրորդ աշխատանքային օրը: Ընդ որում, ապրանքների գնման դեպքում հանձնաժողովը գնահատում է նաև ներկայացված տեխնիկական բնութագրերի համապատասխանությունը հրավերի պահանջներին, իսկ անհամապատասխանություն արձանագրելու դեպքում հանձնաժողովի նիստի արձանագրության մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

«ՀՀ ԳՆ-ԲՄԱՊՁԲ-17/2» ծածկագրով ՀՀ գյուղատնտեսության նախարարության կարիքների համար՝ գյուղատնտեսական տեխնիկայի ձեռքբերման նպատակով հայտարարված բաց մրցույթի հրավերի 1-ին մասի 8.17 կետի 2-րդ պաբերության համաձայն՝ հանձնաժողովը գնահատում է նաև ներկայացված ապրանքի ամբողջական նկարագրի համապատասխանությունը նույն հրավերի պահանջներին, իսկ անհամապատասխանություն արձանագրելու դեպքում հանձնաժողովի նիստի արձանագրության մեջ պարտադիր և մանրամասն նկարագրվում են ապրանքի ամբողջական նկարագրում նույն հրավերի պահանջների նկատմամբ արձանագրված անհամապատասխանությունները, իսկ 8.20 կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ նույն հրավերի 1-ին մասի 8.17 կետով նախատեսված որակավորման պահանջները հիմնավորող փաստաթղթերը գնահատելու նպատակով հրավիրվող նիստում՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթերն ամբողջական չներկայացվելու, ինչպես նաև ներկայացված, ներառյալ կոմիտեի կողմից տրամադրված, որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերի և (կամ) ապրանքի ամբողջական նկարագրի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը համակարգի միջոցով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը: Ընդ որում ծանուցմանը պարտադիր կցվում է հանձնաժողովի նիստի արձանագրության պատճենը, որում պարտադիր և մանրամասն պետք է նկարագրված լինեն գնահատման արդյունքում արձանագրված անհամապատասխանությունները, ներառյալ ապրանքի ամբողջական նկարագրի վերաբերյալ: Մինչդեռ ոչ թիվ 3 արձանագրության և ոչ էլ Ընկերությանը ուղղված ծանուցման մեջ որևէ հայտնաբերված անհամապատասխանությունների վերաբերյալ որևէ մանրամասն նկարագրություն չի արվել: Այսինքն, գնահատող հանձնաժողովը չի ապահովել Կարգի 46-րդ կետի ինչպես նաև հրավերի 8.17 և 8.20

կետերի պարտադիր պահանջը՝ չի արձանագրել և Ընկերությանը չի տրամադրել թե ինչ անհամապատասխանություններ է հայտնաբերել և առավել ևս չի տրամադրել մանրամասն նկարագրություն, որի պատճառով Ընկերությանը հայտնվել է թյուրիմացության և նման իրավիճակի մեջ:

Ընկերությունը բազմիցս փորձել է հեռախոսակապով կապնվել նախարարության որևէ պատասխանատու անձի հետ և պարզելու անհամապատասխանության ներքո թաքնված բովանդակությունը՝ սակայն ապարդյուն:

Հաշվի առնելով, որ Ընկերությանը տրամադրվել է 1 աշխատանքային օր շտկելու համար, Ընկերությունը իր պատկերացմամբ, թե հանձնաժողովն երևի ինչ է նկատի ունեցել, փոփոխել է «Առաջին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիր» թիվ 6.1 հավելվածը, մասնավորապես՝ ապրանքային նշանը, արտադրողի անվանումը և ծագման երկիրը՝ ներկայացնելով նաև ծանոթություն, որ որոշակի պարամետրեր կարելի է հստակ նշել միայն տեխնիկական հավաքման արտադրամասից դուրս բերելուց հետո՝ սակայն դրանք չեն շեղվելու մրցույթի հրավերի տեխնիկական բնութագրում նշված պարամետրերի միջակայքից:

Նշված ծանոթության մասը Ընկերությունը գրել է հաշվի առնելով հրավերի տեխնիկական բնութագիրով սահմանված Ապրանքի տեխնիկական չափանիշների համար ընդունելի նվազագույն և առավելագույն չափանիշների միջակայքը և որ այդ միջակայքի սահմաններում մատակարարված Ապրանքն ամեն դեպքում ընդունելի է Պատվիրատուի համար:

Այսինքն, Ընկերությունը բովանդակային առումով կատարել է Կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերության պահանջները՝ հստակեցնելով առաջարկվող ապրանքային նշանը, արտադրողի անվանումը, ծագման երկիրը, ապրանքի տեխնիկական բնութագրերը, որը լինելու է հրավերի տեխնիկական բնութագրին համապատասխան:

Մրցույթի ընթացակարգի հանձնաժողովի 10.08.2017թ. նիստին (թիվ 4 արձանագրություն) Ընկերության հայտը մրցույթի հանձնաժողովի կողմից մերժվեց՝ Կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերության պահանջները չպահպանելու հիմնավորմամբ, ինչպես նաև արձանագրվեց մանրամասն նկարագրություն, թե թիվ 6.1 հավելվածի աղյուսակի տեխնիկական բնութագիր սյունակի որ չափանիշները չեն պահպանվել:

Այսինքն, մրցույթի հանձնաժողովը դիտավորյալ ի սկզբանե չի տրամադրել իր կողմից դիտարկված անհամապատասխանությունները Ընկերությանը, որպիսի վերջինս հնարավորություն չունենա շտկելու այն և Ընկերության հայտը մերժել են՝ արդեն իսկ մանրամասն արձանագրելով նախապես հայտնաբերված անհամապատասխանությունները:»:

Ընկերությունը Խորհրդին ներկայացված բողոքով խնդրել է՝

Չեղյալ համարել «ՀՀ ԳՆ-ԲՄԱՊՁԲ-17/2» ծածկագրով բաց ընթացակարգի հանձնաժողովի N 4 արձանագրությամբ «Նաս Ջեներալ Թրեյդինգ» ՍՊԸ-ին մերժելու մասին որոշումը, ինչպես նաև մյուս մասնակցի հետ պայմանագիր կնքելու որոշման առկայության դեպքում՝ պայմանագիր կնքելու որոշումը:

Խորհրդի նիստերին մասնակցում էր «Նաս Ջեներալ Թրեյդինգ» ՍՊԸ-ի տնօրեն Երվանդ Խաչատրյանը:

2. <u>ՀՀ գյուղատնտեսության նախարարության կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը, հիմնավորումները և դիրքորոշումը.</u>

ՀՀ գյուղատնտեսության նախարարությունը (այսուհետ՝ նաև Պատվիրատու) Խորհրդին 17.08.2017 թիվ ԱԿ/ԿԱ-1/7445-17 գրությամբ ներկայացրել է գրավոր դիրքորոշում, որով հայտնել է հետևյալը.

«ՀՀ գյուղատնտեսության նախարարության կարիքների համար գյուղատնտեսական տեխնիկայի ձեռքբերման նպատակով 2017 թվականի հուլիսի 13-ին հայտարարված «ՀՀ ԳՆ-ԲՄԱՊՁԲ-17/2» ծածկագրով գնման ընթացակարգին հայտ են ներկայացրել «Նաս Ջեներալ Թրեյդինգ» և «Հրաշք Այգի» ՍՊԸ-ները: Հայտերի բացման նիստի արդյունքում 1-ին չափաբաժնով նվազագույն գնային առաջարկ է ներկայացրել «Նաս Ջեներալ Թրեյդինգ» ՍՊԸ-ն: Սահմանված կարգով և ժամկետում վերջինիս առաջարկվել է ներկայացնել «ՀՀ ԳՆ-ԲՄԱՊՁԲ-17/2» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերով պահանջվող որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերն ու առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը, ինչն էլ վերջինիս կողմից սահմանված կարգով և ժամկետներում ներկայացվել է գնահատող հանձնաժողովին:

Գնահատող հանձնաժողովի կողմից ուսումնասիրվել է վերջինիս ներկայացրած փաստաթղթերը, որի արդյունքում առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրում հայտնաբերվել է անհամապատասխանություն ՀՀ կառավարության 2017 թվականի

մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերության պահանջների նկատմամբ:

Գնահատող հանձնաժողովը սահմանված կարգով ծանուցել է «Նաս Ջեներալ Թրեյդինգ» ՍՊԸ-ին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը: Վերջինիս կողմից մեկ աշխատանքային օրվա ընթացքում ներկայացվել է վերոնշյալ փաստաթուղթն՝ առանց լիարժեք շտկման (համապատասխան արձանագրությունը կցվում է): 2017 թվականի օգոստոսի 10-ին կայացած հայտերի գնահատման նիստում ընդունված որոշմամբ գնահատող հանձնաժողովը «Նաս Ջեներալ Թրեյդինգ» ՍՊԸ-ի հայտը մերժել է և սահմանված կարգով առաջին տեղն զբաղեցրած մասնակից է ճանաչել հաջորդ տեղն զբաղեցրած մասնակցին:»:

Պատվիրատուն ի լրումն ներկայացված դիրքորոշման, 23.08.2017թ. էլեկտրոնային փոստի միջոցով Խորհրդին ուղարկված գրությամբ հայտնել է հետևյալը.

««ՀՀ ԳՆ-ԲՄԱՊՁԲ-17/2» ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի կողմից ուսումնասիրվել է «Նաս Ջեներալ Թրեյդինգ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Կազմակերպություն) կողմից ներկայացված «Առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիր (Հավելված 6.1)» փաստաթուղթը (այսուհետ՝ նկարագիր) և արդյունքում արձանագրվել է, որ կազմակերպության կողմից նկարագիրը կազմելիս չեն պահպանվել ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 32-րդ կետի 1-ի ենթակետի «զ» պարբերության պահանջները՝ մասնավորապես նկարագրով ներկայացվել է երեք ապրանքի անվանում, երկու ապրանքային նշան, ինը արտադրող երկիր, ինչպես նաև հստակ չեն նշվել առաջարկվող ապրանքների տեխնիկական բնութագրերն, ուստի «ՀՀ ԳՆ-ԲՄԱՊՁԲ-17/2» ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի կողմից 08.08.2017թ. որոշում է կայացվել կազմակերպությանն առաջարկել մեկ աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել առաջարկվող ապրանքի նկարագիրը ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերության համապատասխան:

Կազմակերպությունը սահմանված ժամկետում՝ 09.08.2017թ. ներկայացրել է նկարագիրը, սակայն դրանով հստակեցվել են միայն ապրանքի անվանումը, ապրանքային նշանը, արտադրող երկիրը, արտադրման տարեթիվը, իսկ առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրերը հստակ չեն ներկայացվել, մասնավորապես, հստակ չեն նշվել ապրանքի չափերը և զանգվածը, ընդհանուր բարձրությունը,

անվամեջը, զանգվածն առանց բալաստի, շարժիչի աշխատանքային ծավալը, հզորությունը, հաստատուն հզորության ընդգրկույթ., առավելագույն պտտող մոմենտը, վառելիքի բաքի տարողությունը, փոխանցման տուփի տեսակը, ռեվերսային մեխանիզմ տեսակը, պտտման նոմինալ հաճախականության ժամանակ մատուցումը, հիդրոբաշխիչի հատվածամասերի քանակը, խաչաձև լծակի տեսակը, բարձրացման առավելագույն ուժը, շրջադարձի շառավիղը, ճոճանակավոր քարշածողի տեսակը, 4-կետանոց կախոցի տեսակը, օպերատորի նստատեղի տեսակը, ավտոմատ վարման համակարգի նախապատրաստման տեսակը, համակարգչային հեռահար կապի տեսակը:

Ավելին կազմակերպության կողմից նկարագիրը ամփոփվել է «Ծանոթություն» տողով, համաձայն որի նշվել է, որ ապրանքի որոշակի պարամետրեր կարելի է հստակ նշել միայն տեխնիկան հավաքման արտադրամասից դուրս բերելուց հետո, սակայն դրանք չեն շեղվելու մրցույթի հրավերի տեխնիկական բնութագրով նշված պարամետրերի միջակայքից: Հետևաբար կարելի է փաստել հետևյալը.

- կազմակերպությունը ընդունում է, որ իր կողմից ներկայացված նկարագիրը հստակ չէ,

- չի պահպանվել ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 32-րդ կետի 1-ին ենթակետի զ) պարբերության պահանջները, այն է՝ «.....առաջին տեղն զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում հրավերով սահմանված կարգով ներկայացնում է նաև առաջարկվող ապրանքային նշանն արտադրողի անվանումը, ծագման երկիրը, ապրանքի տեխնիկական բնութագրերը (այսուհետ՝ ապրանքի ամբողջական նկարագիր)»:

Բացի դա կազմակերպության բողոքում նշում է կատարվել դեռևս 31.07.2017թ. ստացված ծանուցման համաձայն 3 աշխատանքային օրվա ընթացքում (02.08.2017թ.) հրավերի 2-րդ մասի 3-րդ բաժնով նախատեսված որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերն ու առաջարկված ապրանքի (ապրանքների) ամբողջական նկարագիրը ներկայացնելու վերաբերյալ:

Այնուհետև միևնույն բողոքում նշում է կատարվել ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերության համապատասխան առաջարկվող ապրանքի վերաբերյալ 09.08.2017թ. նկարագիր ներկայացնելու մասին:

Այս դեպքում, հաշվի առնելով բողոքում ներառված դրույթներն, անհասկանալի և անտրամաբանական է դառնում կազմակերպության կողմից ապրանքի (ապրանքների) ամբողջական նկարագիրը կրկին անգամ մասնակի փոփոխություններով 09.08.2017թ. ներկայացնելու հանգամանքը, քանի որ ըստ նույն բողոքի՝ վերջինս դեռևս 02.08.2017թ. արդեն իսկ ներկայացրել էր այն և ըստ բողոքի բովանդակության նա ընդամենը պետք է հաստատեր նախկին նկարագիրը:

Միաժամանակ հայտնում եմ, որ ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 32-րդ կետի 13-րդ ենթակետով նախատեսված է, որ ապրանքների գնման դեպքում պայմանագրի նախագծում ներառվում է ընտրված մասնակցի կողմից հայտով ներկայացված ապրանքի ամբողջական նկարագիրը, իսկ, ինչպես վերը նշվեց, կազմակերպության կողմից ներկայացված նկարագրում ոչ ամբողջական է նշվել ապրանքի նկարագիրն, ինչը խոչընդոտ է հանդիսանում ապրանքի գնման պայմանագիր կնքելու համար:»:

Պատվիրատուն 23.08.2017թ. Խորհրդում տեղի ունեցած նիստի ժամանակ ներկայացրած գրությամբ հայտնել է հետևյալ դիրքորոշումը.

«Նաս Ջեներալ Թրեյդինգ» ՍՊԸ-ի կողմից 2017 թվականի օգոստոսի 21-ին ներկայացված դիրքորոշման վերաբերյալ հայտնում եմ, որ «Նաս Ջեներալ Թրեյդինգ» ՍՊԸ-ն (այսուհետ՝ Կազմակերպություն) իր գրավոր դիրքորոշմամբ ընդունել է, որ «ՀՀ ԳՆ-ԲՄԱՊՁԲ-17/2» ծածկագրով բաց ընթացակարգի հայտերի բացման 28.07.2017թ. նիստով ճանաչվել է որպես 1-ին տեղն զբաղեցրած մասնակից, ում առաջարկվել է 3 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող հրավերի 2-րդ մասի 3-րդ բաժնով նախատեսված փաստաթղթերն ու առաջարկված ապրանքի /ապրանքների/ ամբողջական նկարագիրը:

Կազմակերպությունը նույն դիրքորոշմամբ ընդունել է նաև, որ դեռևս 02.08.2017թ. ներկայացրել է իր որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերն, այդ թվում նաև (թիվ 6.1 հավելվածը) առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը՝ հրավերի տեխնիկական բնութագրին համապատասխան:

«ՀՀ ԳՆ-ԲՄԱՊՁԲ-17/2» ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի կողմից ուսումնասիրվել է Կազմակերպության կողմից ներկայացված «Առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիր (Հավելված 6.1)» փաստաթուղթը (այսուհետ՝ նկարագիր) և արդյունքում արձանագրվել է, որ

Կազմակերպության կողմից նկարագիրը կազմելիս չեն պահպանվել ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերության պահանջները՝ մասնավորապես, նկարագրով ներկայացվել է երեք ապրանքի անվանում, երկու ապրանքային նշան, ինը արտադրող երկիր, ինչպես նաև հստակ չեն նշվել առաջարկվող ապրանքների տեխնիկական բնութագրերն, ուստի «ՀՀ ԳՆ-ԲՄԱՊՁԲ-17/2» ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի կողմից 08.08.2017թ. որոշում է կայացվել Կազմակերպությանն առաջարկել մեկ աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել առաջարկվող ապրանքի նկարագիրը՝ ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերության համապատասխան:

Տվյալ գործընթացն իրականացվել է միանշանակ հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 46-րդ կետի պահանջը և հաշվի առնելով, որ Կազմակերպության կողմից ներկայացված նկարագիրն ամբողջությամբ չի համապատասխանել ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերության, իսկ այդ կետով սպառիչ ամրագրված է ապրանքի ամբողջական նկարագիր հասկացությունը, այն է՝ «.....առաջին տեղն զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում հրավերով սահմանված կարգով ներկայացնում է նաև առաջարկվող ապրանքային նշանն արտադրողի անվանումը, ծագման երկիրը, ապրանքի տեխնիկական բնութագրերը (այսուհետ՝ ապրանքի ամբողջական նկարագիր),», այլ մեխանիկորեն արտատպել է հրավերով սահմանված տեխնիկական բնութագիրն, ինչը հանձնաժողովին զրկել է ընդհանրապես իր գործառույթը՝ գնահատում իրականացնելու, դրա արդյունքում անհամապատասխանություններ հայտնաբերելու և այդ մասին մանրամասն նշում կատարելու հնարավորությունից: Ուստի հանձնաժողովը օրենսդրությամբ սահմանված կարգով դիմել է Կազմակերպությանը նկարագիրը հիշյալ իրավական ակտին համապատասխան ներկայացնելու պահանջով որպես այդպիսին հետագայում գնահատման ենթակա հանգամանք կամ հանգամանքներ ունենալու նպատակով՝ այսպիսով ապահովելով ընթացակարգի փաստաթղթերի ամբողջական, սպառիչ, լրիվ, պատշաճ կազմումը:

Կազմակերպությունը սահմանված ժամկետում՝ 09.08.2017թ., ներկայացրել է նկարագիրը, սակայն դրանով հստակեցվել են միայն ապրանքի անվանումը,

ապրանքային նշանը, արտադրող երկիրը, իսկ տեխնիկական բնութագրերի մեջ՝ միայն արտադրման տարեթիվը:

Ավելին Կազմակերպության կողմից նկարագիրն ամփոփվել է «Ծանոթություն» տողով, համաձայն որի նշվել է, որ ապրանքի որոշակի պարամետրեր կարելի է հստակ նշել միայն տեխնիկան հավաքման արտադրամասից դուրս բերելուց հետո, սակայն դրանք չեն շեղվելու մրցույթի հրավերի տեխնիկական բնութագրով նշված պարամետրերի միջակայքից: Հետևաբար.

- Կազմակերպությունը ընդունում է, որ իր կողմից ներկայացված նկարագիրը հստակ չէ,

- չի պահպանվել ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերության պահանջները:

Ընդ որում ըստ դիրքորոշման նշված «Ծանոթություն» մասը Կազմակերպությունը գրել է՝ հաշվի առնելով հրավերի տեխնիկական բնութագրով սահմանված ապրանքի տեխնիկական չափանիշների համար ընդունելի նվազագույն և առավելագույն չափանիշների միջակայքը և որ այդ միջակայքի սահմաններում մատակարարված ապրանքն ամեն դեպքում ընդունելի է պատվիրատուի համար:

Նման մոտեցումն անընդունելի է, քանի որ օրենսդիրը սահմանելով հավելված 6.1-ը հստակ տրամաբանություն է հետապնդել այդ փաստաթղթով մինչև պայմանագրի կնքումը պահանջվող տեղեկատվությունն ստանալու համար:

Հակառակ դեպքում, առողջ տրամաբանությունը հուշում է, որ բավական կլիներ 1-ին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից ընդամենը պարտավորագիր ներկայացնելը առաջարկվող ապրանքը տեխնիկական բնութագրին համապատասխան սահմանված ժամկետում ներկայացնելու վերաբերյալ:

Իսկ ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 32-րդ կետի 13-րդ ենթակետով նախատեսված է, որ ապրանքների գնման դեպքում պայմանագրի նախագծում ներառվում է ընտրված մասնակցի կողմից հայտով ներկայացված ապրանքի ամբողջական նկարագիրը, իսկ, ինչպես վերը նշվեց, Կազմակերպության կողմից ներկայացված նկարագրում ոչ ամբողջական է նշվել ապրանքի նկարագիրն, ինչը խոչընդոտ է հանդիսանում ապրանքի գնման պայմանագիր կնքելու համար:

Բացի դա Կազմակերպության և բողոքում, և դիրքորոշման մեջ նշում է կատարվել դեռևս 02.08.2017թ. հրավերով նախատեսված որակավորման չափանիշները

հիմնավորող փաստաթղթերն ու առաջարկված ապրանքի (ապրանքների) ամբողջական նկարագիրը ներկայացնելու վերաբերյալ:

Այնուհետև միևնույն բողոքում նշում է կատարվել ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերության համապատասխան առաջարկվող ապրանքի վերաբերյալ 09.08.2017թ. նկարագիր ներկայացնելու մասին:

Այս դեպքում, հաշվի առնելով բողոքում ներառված դրույթները, անհասկանալի և անտրամաբանական է դառնում Կազմակերպության կողմից ապրանքի (ապրանքների) ամբողջական նկարագիրը կրկին անգամ մասնակի փոփոխություններով 09.08.2017թ. ներկայացնելու հանգամանքը, քանի որ ըստ նույն բողոքի վերջինս դեռևս 02.08.2017թ. արդեն իսկ ներկայացրել էր այն և ըստ բողոքի և դիրքորոշման բովանդակության նա ընդամենը պետք է հաստատեր նախկին նկարագիրը:

Բացի դա Կազմակերպության կողմից կազմված նկարագրում նշում չէր կատարվել նաև առաջարկվող տեխնիկայի անխափան աշխատանքի և վերանորոգումների պարբերական ապահովման, երաշխիքային և ետ երաշխիքային սպասարկման վերաբերյալ «ՀՀ ԳՆ-ԲՄԱՊՁԲ-17/2» ծածկագրով բաց մրցույթի հրավերով նախատեսված պայմանի մասին:

Այլ Կազմակերպության կողմից ներկայացված նկարագրում վերոհիշյալ պահանջը ընդամենը նույնությամբ երկու դեպքում էլ դարձյալ արտատպվել էր ճիշտ այնպես, ինչպես ներկայացված է եղել «ՀՀ ԳՆ-ԲՄԱՊՁԲ-17/2» ծածկագրով բաց մրցույթի հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրում՝ այն է, «Տրակտորների մատակարար կարող է հանդիսանալ ՀՀ-ում դրանց սպասարկման (տեխնիկական) լուրջ կարողություններ ունեցող ընկերություն՝ ապահովելու դրանց անխափան աշխատանքը և վերանորոգումների պարբերական երաշխիքային և ետ երաշխիքային սպասարկումը:»:

Փաստորեն ակնհայտ է, որ Կազմակերպությունը, ի սկզբանե չիմանալով իր իսկ կողմից առաջարկվող ապրանքի առանձնահատկությունները, դիտավորյալ փորձում է թյուրիմացության մեջ գցել հանձնաժողովին և ՀՀ գյուղատնտեսության նախարարությանը (այսուհետ՝ Նախարարություն)՝ ներկայացնելով պետության կարիքների համար գնվող ապրանքների ոչ հստակ նկարագիր:

Ինչ վերաբերում է Կազմակերպության գրությամբ նշված այն փաստին, թե իբր Կազմակերպությունը բազմիցս փորձել է հեռախոսակապով կապվել Նախարարության որևէ պատասխանատու անձի հետ և պարզել Կազմակերպության կողմից այսպես

կոչված անհամապատասխանության ներքո թաքնված բովանդակությունը՝ սակայն ապարդյուն, հայտնում եմ, որ ինչպես «ՀՀ ԳՆ-ԲՄԱՊՁԲ-17/2» ծածկագրով բաց մրցույթի հրավերի հայտարարության մեջ նշված հանձնաժողովի քարտուղար Արթուր Ապերյանի (Հեռ. 011 54-21-19), այնպես էլ Նախարարության որևէ պատասխանատու անձի հետ նշված հարցով չեն կապվել (հեռախոսակապ, էլ.փոստ և այլն), ավելին՝ Կազմակերպության ղեկավարը կամ Կազմակերպության կողմից լիազորված որևէ անձ կարող էին ցանկացած ժամանակ այցելել Նախարարություն ճշտելու պահանջվող տեղեկատվությունը:

Վերոգրյալը հիմնավորվում է նաև ս.թ. օգոստոսի 23-ին ժամը 12:00-ին կայացած ԳԲԽ-ԷՍ-2017/31 բողոքը քննող խորհրդի նիստի ընթացքում Կազմակերպության և Նախարարության ներկայացուցիչների միջև տեղի ունեցած հարց ու պատասխանի ընթացքում՝ մասնավորապես, Կազմակերպության տնօրեն Ե.Խաչատրյանը հայտարարեց, որ ամեն դեպքում անկախ որևէ հանգամանքից նույն ընթացակարգի շրջանակներում իրականացված ընթացակարգի ընթացքում յուրաքանչյուր անգամ նկարագիր ներկայացնելիս ինչպես նա, այնպես էլ ոչ ոք չէր կարող ներկայացնել առաջարկվող ապրանքի հստակ տեխնիկական բնութագրերը քանի դեռ դրանք դուրս չեն բերվել հավաքման արտադրամասից, այսպիսով Ե.Խաչատրյանը անձամբ հաստատեց այն հանգամանքը, որ որևէ դեպքում ինքը չէր կարող հստակ ներկայացնել օրենսդրության պահանջներով սահմանված նկարագիր և ինքն իր հերթին դրանով իսկ հիմնավորեց Նախարարության կողմից իրականացված նույն ընթացակարգի ընթացքում կատարված գործողությունների համապատասխանությունը ՀՀ գործող օրենսդրությանը:

Ուստի հաշվի առնելով նաև Կազմակերպության տնօրեն Ե.Խաչատրյանի կողմից բերված վերոգրյալ փաստական հանգամանքները Նախարարության ներկայացուցիչը դիմեց ԳԲԽ-ԷՍ-2017/31 բողոքը քննող խորհրդին որպեսզի Կազմակերպության կողմից ներկայացված բողոքն ամբողջությամբ մերժվի:

Միաժամանակ հայտնում եմ, որ Կազմակերպությունը խնդրել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն տրամադրել «Հրաշք Այգի» ՍՊԸ-ի կողմին ներկայացված գնման հայտը և դրա մաս կազմող ամբողջ փաստաթղթերի պատճենները:

Ցանկանում եմ նշել, որ Նախարարությունը «Հրաշք Այգի» ՍՊԸ-ին որևէ գնման հայտ չի ներկայացրել, իսկ եթե խնդրանքը վերաբերում է «Հրաշք Այգի» ՍՊԸ-ի կողմից ներկայացված գնման հայտին, ապա պետք է նշեմ, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի

9-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ պատվիրատուն պարտավոր է գնման ընթացակարգի արձանագրության կամ դրա մաս կազմող փաստաթղթի պատճենը, բացառությամբ պետական գաղտնիք պարունակող գնումների, տրամադրել ցանկացած անձի՝ վերջինիս կողմից նման պահանջ ստանալուց 5 աշխատանքային օրվա ընթացքում: Հետևաբար, ենթադրությունների հիման վրա Կազմակերպության դիրքորոշումը մեկնաբանելուց խուսափելու նպատակով առաջարկում եմ հստակեցնել վերոհիշյալ խնդրանքը:»:

Խորհրդի նիստերին մասնակցում էին ՀՀ գյուղատնտեսության նախարարության ներկայացուցիչներ՝ Արտաշես Կիրակոսյանը, Արթուր Աբաջյանը, Միքայել Կարապետյանը, Խաչատուր Աբաջյանը և Վարդան Ղուշչյանը:

3. <u>ԳԲԽ-ԷՍ-2017/31 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

Խորհուրդն ուսումնասիրել է «Նաս Ջեներալ Թրեյդինգ» ՍՊԸ-ի 15.08.2017թ. ներկայացրած բողոքը, ՀՀ գյուղատնտեսության նախարարության 17.08.2017 թիվ ԱԿ/ԿԱ-1/7445-17 և 23.08.2017թ. գրությունները, «ՀՀ ԳՆ-ԲՄԱՊՁԲ-17/2» ծածկագրով բաց ընթացակարգի հրավերը (այսուհետ՝ Հրավեր), «ՀՀ ԳՆ-ԲՄԱՊՁԲ-17/2» ծածկագրով բաց ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 28.07.2017թ. նիստի թիվ 2, 10.08.2017թ. թիվ 4 արձանագրությունները, Ընկերության 21.08.2017թ. էլեկտրոնային եղանակով Խորհրդին ուղարկված գրությունը, Պատվիրատուի ներկայացրած կարծիքները և դիրքորոշումները.

ՀՀ գյուղատնտեսության նախարարության կարիքների համար գյուղատնտեսական տեխնիկայի ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՀՀ ԳՆ-ԲՄԱՊՁԲ-17/2» ծածկագրով բաց ընթացակարգ (այսուհետ՝ նաև ընթացակարգ), որին մասնակցության հայտ է ներկայացրել «Նաս Ջեներալ Թրեյդինգ» ՍՊԸ-ն:

Հանձնաժողովը՝

• 28.07.2017թ. նիստի թիվ 2 արձանագրության 1.6.1 կետով Ընկերությանը ճանաչել է առաջին տեղն զբաղեցրած մասնակից:

• Նույն արձանագրության 1.8 կետով որոշել է հաջորդ՝ հայտերի գնահատման նիստը հրավիրել 1-ին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից որակավորման փաստաթղթերը ներկայացնելու օրվան հաջորդող օրվա ժամը 11:00-ին:

• 08.08.2017թ. նիստի թիվ 3 արձանագրության 1-ին կետով որոշել է առաջարկել «Նաս Ջեներալ Թրեյդինգ» ՍՊԸ-ին մեկ աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել առաջարկվող ապրանքի նկարագիրը՝ ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N1 հավելվածի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» կետին համապատասխան:

Սակայն, Հանձնաժողովի 10.08.2017թ. նիստի թիվ 4 արձանագրության 1-ին կետով կայացված որոշմամբ՝ «Նաս Ջեներալ Թրեյդինգ» ՍՊԸ-ի հայտը մերժվել է՝ 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» կետի պահանջները չպահպանելու հիմնավորմամբ:

Որպես մերժման հիմնավորում նշված արձանագրությամբ հանձնաժողովն արձանագրել է հետևյալը.

«Հստակ չի նշվել առաջարկվող ապրանքի երկարությունը, ընդհանուր բարձրությունը, անվամեջը, զանգվածն առանց բալաստի, շարժիչի աշխատանքային ծավալը, հզորությունը, հաստատուն հզորության ընդգրկությունը, առավելագույն պտտող մոմենտը, վառելիքի բաքի տարողությունը, փոխանցման տուփի տեսակը, ռեվերսային մեխանիզմի տեսակը, պտտման նոմինալ հաճախականության ժամանակ մոտեցումը, հիդրոբաշխիչի հատվածամասերի քանակը, խաչաձև լծակի տեսակը, բարձրացման առավելագույն ուժը, շրջադարձի շառավիղը, ճոճանակավոր քարշաձողի տեսակը, 4 կետանոց կախոցի տեսակը, օպերատորի նստատեղի տեսակը, ավտոմատ վարման համակարգի նախապատրաստման տեսակը, համակարգչային հեռահար կապի տեսակը:»:

Հանձնաժողովն արձանագրել է նաև, որ Ընկերության կողմից ներկայացված ապրանքի նկարագիրն ամփոփվել է «Ծանոթություն» տողով, որտեղ նշվել է, որ ապրանքի որոշակի պարամետրեր կարելի է հստակ նշել միայն տեխնիկան հավաքման արտադրամասից դուրս բերելուց հետո, սակայն դրանք չեն շեղվելու մրցույթի հրավերի տեխնիկական բնութագրով նշված պարամետրերի միջակայքից:

Ընկերությունը Ընթացակարգին մասնակցելու նպատակով ներկայացված հայտի N 4 հավելվածով՝ առաջարկվող ապրանքի՝ հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին համապատասխանության մասին հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ «ՀՀ ԳՆ-ԲՄԱՊՁԲ-17/2» ծածկագրով բաց մրցույթին մասնակցելու նպատակով իր կողմից ներկայացված մասնակցության դիմումում նշված չափաբաժնի (չափաբաժինների) մասով առաջարկվող ապրանքի (ապրանքների) տեխնիկական

բնութագրերը համապատասխանում են նույն հրավերի համապատասխան չափաբաժնում (չափաբաժիններում) նշված ապրանքի (ապրանքների) տեխնիկական բնութագրերի պահանջներին, և պարտավորվում է առաջին տեղն զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում «ՀՀ ԳՆ-ԲՄԱՊՁԲ-17/2» ծածկագրով բաց մրցույթի հրավերով սահմանված կարգով և ժամկետներում ներկայացնել իր կողմից առաջարկվող ապրանքի (ապրանքների)՝ անվանումը, ապրանքային նշանը, արտադրողը, ծագման երկիրը և տեխնիկական բնութագրերը (ապրանքի ամբողջական նկարագիր):

Բողոքի քննության նպատակով 17.08.2017թ. և 23.08.2017թ. տեղի ունեցած նիստերի ժամանակ «Նաս Ջեներալ Թրեյդինգ» ՍՊԸ-ի տնօրենը, ինչպես նաև Պատվիրատուի ներկայացուցիչը պնդեցին Խորհրդին գրավոր ներկայացված դիրքորոշումները:

Խորհուրդն արձանագրում է, որ բողոքի քննության նիստի ընթացքում Պատվիրատուի ներկայացուցչի այն հարցին, թե արդյոք Ընկերությունը գնման ենթակա ապրանքի տեխնիկական բնութագիրը կազմելիս մնում է այն համոզմունքին, որ նախապես՝ մինչև ապրանքը գործարանի կողմից արտադրելը, հնարավոր չէ այնուամենայնիվ հստակ նկարագրել ապրանքի տեխնիկական բնութագիրը, «Նաս Ջեներալ Թրեյդինգ» ՍՊԸ-ի տնօրենը պատասխանեց, որ տեխնիկական բնութագրում հստակ կարող է ներկայացնել գնման ենթակա ապրանքի բոլոր հատկանիշները՝ բացի ձիաուժից:

ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետև՝ Կարգ)՝

- 32-րդ կետի 1-ին կետի զ. ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ՝ մասնակիցը հայտով ներկայացնում է ապրանքների գնման դեպքում իր կողմից հաստատված հայտարարություն՝ առաջարկվող ապրանքի՝ հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին համապատասխանության վերաբերյալ՝ պայմանով, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում հրավերով սահմանված կարգով ներկայացնում է նաև առաջարկվող ապրանքային նշանն արտադրողի անվանումը, ծագման երկիրը, ապրանքի տեխնիկական բնութագրերը (այսուհետ՝ ապրանքի ամբողջական նկարագիր):
- 43-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարն՝ էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով ծանուցումն

ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, բացառությամբ նույն կարգով նախատեսված դեպքերի, ապրանքների գնման դեպքում նաև նույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը, իսկ բանկային երաշխիքի ձևով ներկայացված հայտի ապահովման բնօրինակը՝ կից գրությամբ:

• 46-րդ կետի համաձայն՝ նույն կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետով նախատեսված ժամկետի ավարտին հաջորդող աշխատանքային օրը քարտուղարն էլեկտրոնային եղանակով հանձնաժողովի անդամներին միաժամանակ տրամադրում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերի պատճենները, գնահատման թերթիկների երկուական օրինակ և կոմիտեից ստացված տեղեկատվությունը: Հայտերի գնահատման արդյունքների հաստատման նիստը հրավիրվում է ոչ ուշ, քան փաստաթղթերը հանձնաժողովի անդամներին տրամադրվելուն հաջորդող երրորդ աշխատանքային օրը: Ընդ որում, ապրանքների գնման դեպքում հանձնաժողովը գնահատում է նաև ներկայացված տեխնիկական բնութագրերի համապատասխանությունը հրավերի պահանջներին, իսկ անհամապատասխանություն արձանագրելու դեպքում հանձնաժողովի նիստի արձանագրության մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

• 48-րդ կետի համաձայն՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում՝

1) շտկելու դեպքում հայտը գնահատվում է բավարար և առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից.

2) չշտկելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է, և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացվում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

«ՀՀ ԳՆ-ԲՄԱՊՁԲ-17/2» ծածկագրով ՀՀ գյուղատնտեսության նախարարության կարիքների համար՝ գյուղատնտեսական տեխնիկայի ձեռքբերման նպատակով հայտարարված բաց մրցույթի հրավերի 1-ին մասի՝

• 8.17 կետի համաձայն՝ հանձնաժողովը գնահատում է նաև ներկայացված ապրանքի ամբողջական նկարագրի համապատասխանությունը նույն հրավերի պահանջներին, իսկ անհամապատասխանություն արձանագրելու դեպքում հանձնաժողովի նիստի արձանագրության մեջ պարտադիր և մանրամասն նկարագրվում

են ապրանքի ամբողջական նկարագրում նույն հրավերի պահանջների նկատմամբ արձանագրված անհամապատասխանությունները:

• 8.20 կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ նույն հրավերի 1-ին մասի 8.17 կետով նախատեսված որակավորման պահանջները հիմնավորող փաստաթղթերը գնահատելու նպատակով հրավիրվող նիստում՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթերն ամբողջական չներկայացվելու, ինչպես նաև ներկայացված, ներառյալ կոմիտեի կողմից տրամադրված, որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերի և (կամ) ապրանքի ամբողջական նկարագրի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը համակարգի միջոցով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը: Ընդ որում ծանուցմանը պարտադիր կցվում է հանձնաժողովի նիստի արձանագրության պատճենը, որում պարտադիր և մանրամասն պետք է նկարագրված լինեն գնահատման արդյունքում արձանագրված անհամապատասխանությունները, ներառյալ ապրանքի ամբողջական նկարագրի վերաբերյալ:

• 8.21 կետի համաձայն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում՝

1) շտկելու դեպքում հայտը գնահատվում է բավարար և առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից.

2) չշտկելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է և նույն նիստում հանձնաժողովն առաջին տեղն զբաղեցրած մասնակից է ճանաչում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին՝ կիրառելով նույն հրավերի 1-ին մասի 8.13-ից 8.20-րդ կետերով սահմանված ընթացակարգը:

Խորհուրդն արձանագրում է, որ Հանձնաժողովի կողմից 08.08.2017թ. նիստի թիվ 3 արձանագրությունը վերաբերելի չէ Հանձնաժողովի կողմից «Նաս Ջեներալ Թրեյդինգ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված ապրանքի ամբողջական նկարագիրը Հրավերի պահանջներին համապատասխանությունը գնահատելու արդյունքում արձանագրված անհամապատասխանությունները շտկելուն, այլ նշված արձանագրությամբ Հանձնաժողովը ընդամենը որոշում է ընդունել առաջարկել «Նաս Ջեներալ Թրեյդինգ» ՍՊԸ-ին մեկ աշխատանքային օրվա ընթացքում ՀՀ կառավարության 2017 թվականի

մայիսի 4-ի N 526-Ն որոշման N1 հավելվածի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» կետին համապատասխան ներկայացնել առաջարկվող ապրանքի նկարագիրը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Այսպիսով, Խորհուրդը գտնում է, որ Հանձնաժողովը՝ 10.08.2017թ. նիստի թիվ 4 արձանագրությամբ «Նաս Ջեներալ Թրեյդինգ» ՍՊԸ-ի հայտը մերժելով, խախտել է Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասով, Կարգի 46-րդ և 47 կետով, ինչպես նաև Հրավերի 8.17-րդ, 8.20-րդ և 8.21-րդ կետերով սահմանված պահանջները:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի «բ» և «գ» ենթակետերով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. «Նաս Ջեներալ Թրեյդինգ» ՍՊԸ-ի կողմից 15.08.2017թ. ներկայացրած բողոքը բավարարել մասնակի:

2. Չեղյալ համարել «ՀՀ ԳՆ-ԲՄԱՊՁԲ-17/2» ծածկագրով բաց ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 10.08.2017թ. N 4 արձանագրությամբ «Նաս Ջեներալ Թրեյդինգ» ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին որոշումը:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

ՀՀ գնումների բողոքարկման
խորհրդի անդամ՝

ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ